

ՄԻԵՎՆՈՒՅՆ ԲԱՌԱՉԵՎԵՐԻ ԱՐՏԱՅԱՅՏԱԾ ՏԱՐԲԵՐ ԻՄԱՍՏՆԵՐԸ ԱՐԵՎԵԼԱՅԱՅԵՐԵՆՈՒՄ ԵՎ ԱՐԵՎՄՏԱՅԱՅԵՐԵՆՈՒՄ

Ո. Կ. ՍԱԶԱՊԵՏՈՅԱՆ

Արևելաֆայերենի և արևմտաֆայերենի բառապաշարների զուգադրական քննությունը ի հայտ է բերում նաև մի յուրահատուկ բառախումբ, որի մեջ մտնող բառերը, ունենալով ձևային նույնություն, բովանդակության պլանում լիովին չեն համընկնում կամ համընկնում են մասամբ: Այլ կերպ՝ նման բառերի իմաստային դաշտերը լիովին իրար «չեն ծածկում», հանդիպում են թե՛ ամբողջովին վերաիմաստավորված բառեր, թե՛ բառիմաստի ընդլայնմամբ լրացուցիչ իմաստներ և թե՛ ընդհանուր իմաստի նեղացմամբ մասնավոր իմաստ ձեռք բերած բառեր: Նման բառերը կամ համանուններ են, կամ բազմիմաստ բառեր, որոնց իմաստների միջև եղած կապը այնքան է մթազմել, որ գտնվում են բազմիմաստությունից համանունություն անցման վիճակում: Առհասարակ դժվար չէ տարբերակել այն համանունները, որոնք առաջացել են տարբեր արմատներից, ինչպես նաև այն դեպքերը, երբ համահունչ միավորների միջև եղած իմաստային տարբերությունը ուղեկցվում է նաև քերականական ձևերի տարբերությամբ (մասնակի համանունություն): Դժվարություն է ներկայացնում այն համանունների տարբերակումը, որոնք առաջացել են բազմիմաստ բառերի իմաստային մթազմման կամ կորստի հետևանքով: Մեր ուսումնասիրության համար համանուն-բազմիմաստ տարբերակումը առանձին կարևորություն չունի, քանի որ հիմնահարցի տեսական քննությունը դուրս է մեր ուսումնասիրության նպատակներից, մասնավորապես որ հարցը իր ամբողջ լայնքով ու խորքով քննվել է հայ լեզվաբանների կողմից¹: Մեր այս ուսումնասիրության ընթացքում, առաջնորդվելով հայ լեզվաբանների ուսումնասիրությունների արդյունքներով, ջանացել ենք հարցը դիտարկել արևելաֆայերեն-արևմտաֆայերեն կտրվածքով: Նման մոտեցումը, իհարկե, չի կարելի ամբողջովին ճորություն համարել: Այս տեսանկյունով հարցն առաջինը քննել է Հր. Աճառյանը, ապա թողուցիկ անդրադարձել են Գ. Սևակը, Ա. Մուրվալյանը, Ա. Սուքիասյանը, Ս. Էլոյանը, Ռ. Շալունցը և ուրիշներ:

Հր. Աճառյանը այդ առիթով գրում է. «Բառը միևնույնն է, բայց երկու բառաքանակում տարբեր իմաստ ունի»²: Այնուհետև նա բերում է 12 առավել ցայտուն բառային օրինակներ՝ պատկերացում տալու համար հիշյալ բառախմբի մասին (վայրկյան, պտտել, հով, մտիկ անել, լաթ և այլն): Այկնհայտ է, որ խոսքը արևելաֆայերեն-արևմտաֆայերեն համանունների մասին է, որ սովորաբար հակադրվում են տարածքային հատկանիշով: Հայերենի համանուններին անդրադարձող բոլոր հեղինակներն էլ, նշելով համանունների հնարավոր բոլոր տեսակները,

¹ Տե՛ս օրինակ, Էդ. Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր., 1984, Ս. Էլոյան, Ժամանակակից հայերենի բառային ոճաբանություն, Եր., 1989, Ա. Մարգարյան, Ժամանակակից հայոց լեզու (Բառագիտություն), Եր., 1993, Ռ. Շալունց, Համանուն բառերի առաջացման աղբյուրները հայերենում, «Լեզվի և ոճի հարցեր», III, Եր., 1975, Ռ. Շալունց, Համանուն բառերը ժամանակակից հայերենում, «Լեզվի և ոճի հարցեր», IV, Եր., 1977, Գ. Զահուկյան, Էդ. Աղայան և ուրիշներ, Հայոց լեզու, I մաս, Ա պրակ, Եր., 1980, Ա. Սուքիասյան, Ժամանակակից հայոց լեզու (Հնչյունաբանություն, բառագիտություն), Եր., 1982:

² Հր. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, հ. II, էջ 564:

դրանք առանձին ուսումնասիրության նյութ չեն դարձրել հայերենի երկու տարբերակների հակադիր կտրվածքով: Կարծես արդարացնելու համար մեզ մոտեցումը՝ Ռ. Շալունցը իր այդ ընդհանուր առմամբ արժեքավոր ուսումնասիրության մեջ գրում է. «Քանի որ երկու տարբերակների համար էլ բառապաշարը գրեթե ընդհանուր է, և հայության երկու հատվածների համար էլ այն հավասարապես հասկանալի է, ուստի ուսումնասիրության ընթացքում գրական հայերենի ամբողջ բառապաշարը դիտել ենք որպես ընդհանուր համակարգ»³: Սակայն նույն աշխատության մեջ մի այլ տեղ հեղինակը հակասում է ինքն իրեն՝ գրելով. «Օտտ համաճում բառեր (13,1%-ը) հակադրվում են տերիտորիալ հատկանիշով, այսինքն՝ համաճումնական խմբի անդամներից մեկը ընդհանուր է հայերենով արտահայտվող յուրաքանչյուր անձի համար, մյուսը գործածական է միայն արևմտահայ գրական տարբերակում: Այս տեսակետից համաճումնական խմբի անդամները հակադրվում են, երբ մեկ անդամը գործածական է արևելահայ գրական լեզվում, մյուսը՝ արևմտահայերենում:

Հնարավոր է, որ համաճումնական այս տիպը ընկալվի հասարակության ոչ բոլոր անդամների կողմից: Եթե արևելահայ գրական տարբերակով հաղորդակցվող մարդուն անծանոթ է համաճումնական խմբի մեկ անդամը (տվյալ դեպքում արևմտահայերենում գործածվող բառ-համաճումը), ապա նրա համար համաճումնական այս խումբը գոյություն չունի: Եվ ընդհակառակը, եթե արևմտահայերենով խոսող մարդուն անծանոթ է արևելահայերենում գործածվող համաճումներից մեկը, ապա նրա համար ևս համաճումնական այս խումբը գոյություն չունի»⁴:

Բնականաբար ճիշտ է և ընդունելի այս վերջին տեսակետը, որին հեղինակը հանգել է փաստական նյութի թելադրանքով: Արտահայտության պլանում համաճումների միջև գոյություն ունի նույնության հարաբերություն, իսկ բովանդակության պլանում համաճումնական խումբը բնութագրվում է իմաստային որևէ առընչության բացակայությամբ: Արևելահայերեն-արևմտահայերեն կտրվածքով մեզ բառերի թիվը մեր հաշվարկներով կազմում է շուրջ 700 միավոր: Ինչ խոսք. նույն ձևն ունեցող և բովանդակությամբ չհամընկնող բառերի մի մասը կարելի է ընկալել որպես բազմիմաստ բառեր, որոնց միջև իմաստային առընչությունները համաժամանակյա կտրվածքով դեռևս ընկալելի են և առաջանում են իմաստային տարբեր գույությունների կամ հնչյունափոխությունների հետևանքով:

Ուշագրավ է, որ մինևնույն բառը կամ բառաձևը, լեզվի երկու տարբերակներում ձեռք բերելով տարբեր իմաստներ, վերածվել է բազմիմաստ բառի, որն իմաստային անցումների հետագա մթազնումով ձևավորել է համաճումային գույ: Իբրև հիշյալ երևույթի լավագույն ասպացույց կարող է ծառայել այն հանգամանքը, որ այդ բառերը արևելահայերենում և արևմտահայերենում պատկանում են տարբեր խոսքի մասերի: Բերենք մի քանի բնորոշ օրինակներ (նախապես տրվում է բառի արևելահայերենում ունեցած խոսքիմասային պատկանելությունը):

Ազգային - ած. (Ազգային ժողով) // գ. (Պատուաւոր ազգային մըն է):

Ախորժաբեր - ած. Առհասարակ ախորժակ բացող // գ. Ախորժակ բացող թույլ սպիրտային խմիչք (ապերատիվ):

Ամսական - ած. (Ամսական առաջադրանք) // գ. 1. Աշխատավառձ: 2. Թոշակ:

Աներետյո - ած. Չերևացող (Աներետյո թշնամի) // գ. Անորոշ դերբայ:

Անթել - ած. Առանց թելի // գ. Ռադիո(ընդունիչ):

Անոյշ (անուշ) - ած. Քաղցր // գ. Քաղցրավենիք, մուրաբա:

Գիճով - գ. Գիճի բառի գործիականը (Գիճով լի կարաս) // ած./գ. (Գիճով մարդ, գիճովի խոսք):

³ Ռ. Շալունց, Համաճում բառերը ժամանակակից հայերենում, էջ 6:

⁴ Նույն տեղում, էջ 39:

Գրագէտ - ած. Գրաճանաչ // գ. Գրականությամբ զբաղվող, գրող:

Ընդծովեայ - ած. Ստորջրյա // գ. Սուզանավ:

Իմաստային տարբերակվածությունը մի շարք բայերում առաջացրել է նաև բայանոի տարբերություններ, որ շատ բնական է: Արևելահայերենի կանգնել չեզոք սեռի բայի կանգ առնել, ոտքի ելնել իմաստների դիմաց արևմտահայերենում սովորական է նաև դրա պատճառական իմաստը՝ կանգնեցնել (յուշարձան կանգնել), որով այս բայը դառնում է ներգործական: Նույն երևույթը հանդիպում է նաև մի շարք այլ բայերում, օր. ժրել (չբ. - աշխուժանալ և նբ. ամրացնել), կծկել (նբ. թելը կծիկ անել և չբ. ճողոպրել), պտտել / պտըտիլ / - (նբ. պտտեցնել, դարձնել և չբ. զբոսնել, շրջել), սվաղել / սուաղիլ / - (նբ. ծեփել և չբ. սովից՝ ծարավից նվաղել) և այլն:

1. Այս խմբի բառերի մեջ առաջին հերթին առանձնանում են համանունները, որոնք պատահական նմանության արդյունք են: Այսպես՝

Դաշնակ - «Դաշնակցություն» կուսակցության անդամ (Դաշնակները Կարմիր բանակի հարվածներից ջախջախվել էին ու փախել Արաքսի մյուս կողմը... ՍԽ): // Փոքր դաշնամուր (Վահրամ նստած էր դաշնակին առաջ ... ԱԱ):

Լուծում - Լուծելը, լուծվելը (Ղարաբաղյան խնդրի լուծումը պետք է գտնեն շահագրգիռ կողմերը... Մամ.): // Վերլուծություն (Տրամաբանական լուծումը կը կատարենք խօսք առ խօսք ... ՋՄ):

Մրար - Նամակածրար (Մրարը բացելուց հետո մատները դողում էին, երբ հանում էր նամակը... ԱԲ): // 1. Կապոց, փոստային ծանրոց (Թղթատունը այդ տեսակ ծրարները նամակներու հետ չի բաժաներ... ԵՕ): 2. Կտորի հակ, թոփ (Անգլիայէն ապսպրած ամերիքանի ծրարներուն վրայ իր սիրած մէկ աղջկան պատկերը փակցնել տուած էր... ԳԶ):

Կառք - Ծածկ ունեցող, երկանիվ կամ քառանիվ հարմարավետ սայլաձև փոխադրամիջոց (Ահա կառքը՝ մի գույգ ձի լծած... ԱԲ): // Ավտոմեքենա (Խորթ հայրը վարորդ մըն է: Ծատ վարպետ: Ծիփ Մեհմետ կ'ըսեն անոր, այնքան արագ կը վարէ կառքը... Մամ.):

Կարգել - Որևէ գործի նշանակել, (Կարգիր մի բանի, Գնա իր համար աշխատանք անի... ՀԹ): // Պսակել, ամուսնացնել (Տան բծիշկը իրենց երթալէն յետոյ ըսած էր, թէ որչափ կարելի է շուտ կարգէ իր աղջիկը... ԱԱ):

Հով - ած. Ջով (Վերջապես մի հով անտառ են մտնում... ՀԹ) // գ. Մեղմ քամի, հովիկ (Թեպէտ թոչնիկն ու հովն հայոց աներակաց շրջին վերայ... ՄՊ):

Միայն - Բացառապես, միմիայն (Վանդունց Բաղին միայն որդու մասին էր մտածում... ԱԲ): // Մեռակ, միայնակ (Հարիւր հոգվոյ գլուխ հանելիք գործը միայն կուզէ կատարել... ՀՊ):

Ցանկ - Գրքի գլուխների կամ մասերի ցուցակ (Այս գիրքը ցանկ չուցի... Մամ.): // Ցանկապատ (Օ՛, իմ այգիս կուրքի մէջ երկայնքն ի վեր ցանկերուն՝ կը կթէին սարբիման... ԴՎ):

Քանակ - Թիվ, չափման ենթակա քանակություն (Խոսեցին Վարդանի գորքերի քանակի մասին... ԴԴ): // Քանոն (Վարժուհին իր սեղանին առաջ անցած մէկ ձեռքով քանակը կը զարներ սեղանին... ՋԵ): (Իրաւ է, որ մեծ քանակը կոտրեցաւ, բայց սատկեցաւ նաեւ մուկը... ԾԾ):

2. Արևելահայերեն-արևմտահայերեն համանունների մեջ հանդիպում են այնպիսիք, որոնք առաջանում են բառակազմական բաղադրիչների տարակերպ ընկալման պատճառով:

⁵ ԺՀԲԲ-ն նախ տալիս է բառի արևմտահայերեն իմաստը՝ բերելով Դ. Վարուժանի օրինակը, ԱՀԲԲ-ն հնգ. հղումով ցանկ՝ համանունը բացատրում է իբրև ճյուղերից սարքած պատճեշ, ցանկապատ: Այս բառը ցանկ արմատական ձևով արևելահայերենում չի հանդիպում:

Անել - Համապատասխան բայի անորոշ դերբայը (մի բան անել) // Փակուղի (Սիրոյ բոլոր լուսատու ուղիները խոր, անլոյս անելներ են ինձի համար S2):

Այս բառը թեև հազվադեպ, սակայն հանդիպում է նաև արևելահայերենում, բայց ածականական՝ դժվարին, ծանր իմաստներով (Նկարագրելով իր անել վիճակը, մերթ նախատում էր, մերթ աղերսում օգնել իրեն... Օ): Հակառակ սրան՝ արևմտահայերենում բառն ունի նշված գոյականական իմաստը, որի մասին վկայում է նաև անելի մատուցիչ դարձվածքը:

Առանձնապես մակբայը արևելահայերենում նշանակում է **հատկապես**, (Ծերմակ թելերը... իրենց փայլով առանձնապես աչքի էին ընկնում... ՎԽ), իսկ արևմտահայերենում այս բառն ունի առանձին, միայնակ իմաստը (Կը խնդրեմ, որ առանձնապես եւ յատուկ կառքով մը երթամ պալատ... ԵՕ):

Բերում ենք նման համանունների այլ օրինակներ: Նախապես տրվում են բաների արևելահայերեն իմաստները:

Անթել - 1. Անութի տակն առնել, 2. Առանց թելի // Առանց թելի՝ լարի հեռահաղորդում, ռադիո (Եվ կարծեք թե այս բոլորը բավական չըլլային, բաց դռներն ենք անցավ նաև անթելի մը ճոհնչը ... ՕՕ):

Ինչպես տեսնում ենք, այս բառը համանունային գույգ է կազմում նաև արևելահայերենում՝ մի դեպքում կապվելով **անութ**, մյուս դեպքում ան և **թել** բաղադրիչների հետ: Արևմտահայերենում այն 2-րդ՝ առանց թելի իմաստից հեռանալով՝ գործառական հիմքով իմաստափոխվել է և վերածվել գոյականի:

Երկրորդական - Ոչ հիմնական, օժանդակ (Երկրորդական նախադասություն) // Միջնակարգ (Հայրը ... կրցած էր երկրորդական ուսում ալ տալ իր զավակին... ՎՄ): Բառի այս իմաստը ֆրանսերենի *secondaire* բառի իմաստային պատճենումն է: Թե Ֆրանսիայում, թե Սփյուռքում այսպես են անվանվում միջնակարգ դպրոցի բարձր դասարանները (ավագ դպրոց):

Ընդծովեայ - ած. Ստորջրյա (Անդերսենի հեքիաթի գեղանի ջրահարսին թույլ է տրվում հեռանալ մարջանե ընդծովյա ամրոցից... Մամ.): // գ. Սուզանավ (Նախագահը պիտի ժամանե նաւակովն: - Ինչու՞ նավակովն եւ ոչ թէ ընդծովեայով... ՕՕ):

Ընկերային - Ընկերական (Պաշտոնական խոսակցությունը այժմ ավելի մտերմական, ավելի ընկերային ձև էր ստացել... Բ) // Հասարակական, սոցիալական (Երկիրը մեծ առաջընթաց արձանագրած է ընկերային մարզերու մէջ... Մամ.):

Ընկերություն - 1. Ընկերական հարաբերություն (Մանուկներից յուրաքանչյուրն աշխատում էր Անժիկի ընկերությունը ձեռք բերել... ԱԲ): 2. Միություն, կազմակերպություն (Վառդգյանը... խորհրդավոր կերպով ակնարկում էր իր՝ ընկերության անդամ լինելու հանգամանքը... Ե2): // Հասարակություն (Զուարճախօս է, ընկերութիւններու մէջ կ'ախորժի կատակներ ընել... ՀՊ):

Խոնարհություն - Խոնարհ լինելը (Ընթանալ խոնարհության շավղով... Ե2): // Գլուխն իջեցնելը իբրև ողջույնի կամ հարգանքի արտահայտություն (Կիները ... երբեմն սեղանին խոնարհություն մը կ'ընեն ... ԳԶ):

Ձեռնարկ - Ուսումնական օժանդակ գիրք (բուհական ձեռնարկ) // 1. Գործ սկսելը, նախաձեռնություն, 2. Միջոցառում, հանդիսություն (Արդարեւ չափազանց դժուարին ձեռնարկ մըն էր այս ... ԵՕ):

Մականուն - Ավել անուն («Ծառ ուստան» դարբին Վանեսի մականունն էր... ԱԲ): // Ազգանուն (Յետզետե մականունը փոխած էր նախ Նարպէլ եւ ետքը Լուսինեան դառնալով ... ԵՕ):

⁶ Այս իմաստը ժՀԲԲ-ն և Ա. Սարգսյանի Ա. Բ.-ն ներկայացնում են իբրև ընկերական հավաքույթ, մինչդեռ պետք էր ներկայացնել հասարակություն, հանրություն, շրջապատ իմաստներով:

Վարիչ - Հիմնարկի կամ նրա մի բաժնի ղեկավար (Արի քեզ դարձնենք ֆերմայի վարիչ... ՆԶ): // Վարորդ (Կառքի վարիչը կը սեղմէ շշակը... Մամ.): Այս համանունների առաջացման պատճառը վարել բայի տարբեր իմաստներն են՝ ղեկավարել, ուղղություն տալ գործերին (գրաբարյան իմաստ) և ավտոմեքենա քշել:

Տնտեսագիտություն, տնտեսագետ - Գիտություն տնտեսության կառավարման մասին, այդ բնագավառի մասնագետ // Խնայողություն, տնտեսվարություն (Քրիստոստոյր տնտեսագիտութեան դաս ալ կու տայ իր աշակերտներուն, սակաւապէտութեան կը հրաւիրէ զանոնք... ՀՊ):

3. Արևելահայ-արևմտահայ լեզվական համակարգերում համանուններ առաջանում են նաև ուղղագրության փոփոխության կամ տարբեր կարգի հնչյունափոխական երևույթների հետևանքով: Այսպես, գրաբարի յօդ բառը ուղղագրության փոփոխության հետևանքով արևելահայերենում սկսել է գրվել հող, որի հետևանքով նույնանում են ա. ոսկորների խաղ (Հողերս ցավում են) և բ. քերականական հող իմաստները զուտ արևմտահայերեն հող՝ այդտեղ բառի գրության հետ (Հող աստղերը չ'են մեռնիր, Ծաղիկներն հող չ'են թոմսիր, Ամպերը չ'են թրջեր հող, Երբ խաղաղ էք դու և օդ... ՊԴ):

Նույնը վերաբերում է նաև անհող բառին, որ նշանակում է հողագուրկ և համանունային զույգ է կազմում նաև արևելահայերենում՝ առանց մարմնի հողերի և առանց քերականական հողերի, իսկ արևմտահայերենում դրանց լրացուցիչ հակադրվում են անկապ, կցկտոր իմաստները:

Կրող - Կրել բայի ենթակայական դերբայը (բեռ կրող) // Գրող, չար ոգի (Կրողը տանի): Այս տարբերակման շնորհիվ արևմտահայերենը խուսափում է գրող բառի համանունությունից (գրականությամբ զբաղվող և սատանա), որ առկա է արևելահայերենում: Դրանք տարբերվում են նաև արտասանության պլանում՝ հնչվում են գրողը տանի և քրոզներու միություն:

Ձգել - Քաշել, ձիգ տալ (Նա ձգեց գոտին... ու սկսեց պարել... ՍԽ): // Թողնել, նետել, զցել, հետաձգել (Լրիկը ձգել, երկիրը ձգել, գործը ձգել):

Հոյգ բառը գրաբարում նշանակում էր մրգի, բանջարեղենի հյութ. իսկ յոյգ՝ հուզմունք, զգացմունք, որ նույնությամբ պահպանվել է արևմտահայերենում: Արևելահայերենում երկու բառն էլ ունեն նույն գրությունը՝ հույգ, որի հետևանքով առաջացել է համանունություն:

4. Հայերենի երկու ճյուղերի միջև համանուններ առաջանում են նաև այն դեպքերում, երբ արևմտահայերենը պահպանում է բառի գրաբարյան իմաստը, իսկ արևելահայերենում այդ իմաստով բառը դադարում է գործածվել, և նույն հընչությամբով արտահայտվում է բոլորովին այլ իմաստ: Այսպես օրինակ՝

Աներևույթ բառը երկու տարբերակներում էլ ունի չերևացող իմաստը, սակայն արևմտահայերենը պահպանել է նաև բառի՝ գրաբարից եկող՝ քերականական տեղմնի իմաստը՝ անորոշ դերբայ, որ բացակայում է արևելահայերենում՝ դրանով իսկ կազմելով համանունային զույգ երկու տարբերակներում:

Աշխատասիրություն - Աշխատասեր լինելը, ջանասիրություն // Երկ, ստեղծագործություն (Ասկէ անէի ծանր խոսք չկայ հեղինակի մը համար, որ իր մէկ աշխատասիրութիւնն ուրիշի կարդալու փափաք կը յայտնէ... ՀՊ):

Բանավոր - Անգիր, ոչ գրավոր (բանավոր նկատողություն) // Բանական, տրամաբանական (Այս վերջին առաջարկը շատ բանաւոր թուեցաւ ...ԵՕ):

Գնացք - Իրար միակցված վագոններ, որ քաշում է շոգեքարշը // Ընթացք, ընթանալու ձևը (Ով քաղցրութիւնը նայուածքին իր ծաղիկ, ով պերճութիւնը գնացքին իր հպարտ... ՄՄ): (Նախ խոլական արշաւի մը սկսավ կտորը, հետո պրկվող ձիուն գնացքը դադրեցուցին... ԾԾ):

Զանգել - Զանգ տալ, զանգահարել (Զանգ էր կարծես, Զանգում էր զիլ... ԵՁ): // Լուսնել, շաղախել: Պահել է ՆԲՀԼ-ում բերված իմաստը՝ «իբր ոմկ. որ և ԶԱՆԿԱՆԵԼ, ԶԱՆԿԵԼ ... (իբր բոլորովին անկանել, այսինքն հիւսել, յետույ, կամ յանգել.) Խառնել և զօղել ի մի, մանաւանդ զալիւր ընդ ջրոյ կամ իւղոյ. շաղել, շաղախել...»:

Հաստոց - Փայտ կամ մետաղ մշակելու մեքենա, դազգահ // Տարածություն, պատվար, անջրպետ: (ՆԲՀԼ-ն նշում է. «գ. Իբր Հաստարան, պատուար, անջրպետ»:

Յանուն - Համար (Հանուն հայրենիքի) // Անունից: (Գրաբարում այս բառը չունեն արանձին բառային արժեք: ՆԲՀԼ-ն այն բերում է իբրև անուն բառի բացատրական հոլով՝ հետևյալ բացատրությամբ. «Ի դիմաց ընդ անուամբ կամ դիտատրութք ևն: ... Մկրտեցե՛ք զնոսա յանուն հօր, և որդւոյ, և հօգւոյն սբյ»): Արևմտահայերենում պահպանվել է բառի՝ գրաբարյան իմաստով գործածությունը. «Յանուն աշխարհասփյուռ Ռամկավար Ազատական կուսակցութեան ամենաջերմ շնորհատրամբներ եւ լավագոյն մաղթանքներ կը յղենք... Մամ.»:

Պատրվակ - Մտացածին պատճառ (Այստեղ մնալու համար դու պատրվակ ունիս... Մ): // Դեմքի ծածկոց, քող: (ՆԲՀԼ-ն այս բառը բացատրում է իբրև «Ծածկոյթ երեսաց, պարտակ, քող: ... Արկանէր Մովսէս պատրուակ ի վերայ երեսաց իւրոց»:) Ըստ ՀԼՆԲ-ի արևմտահայերենում պահպանվել է բառի գրաբարյան իմաստը:

Ուտղ - Ուսանող, սովորող: // Մաթեմատիկոս: (ՆԲՀԼ-ն այս բառի իմաստը բացատրում է հետևյալ կերպ. «Ուսանող. աշակերտ. ուսումնասէր. և Ուսումնական, որպէս մաթեմատիկոս»:) Սփյուռքի դպրոցներում առ այսօր մաթեմատիկայի դասերը կոչվում են ուտղություն):

5. Արևելահայ-արևմտահայ լեզվական համակարգերում համանուններ առաջանում են նաև փոխառյալ բառի՝ բնիկ հայերեն բառի հետ ձևով համընկնելու դեպքում՝ բնականաբար արտահայտելով ամբողջովին տարբեր բառիմաստ. այսպես՝ անգար բառը արևելահայերենում փոխառություն է ֆրանսերենից (hangar) որուերենի միջնորդավորմամբ (այդ մասին է վկայում բառասկզբի հ-ի անկումը): Այն արևելահայերենում նշանակում է օդանավերի կայանատեղ, մինչդեռ գրաբարում, ինչպես վկայում է ՆԲՀԼ-ն, անգար նշանակում է ա. Թեթև գլխացավ, բ. Թիվ, համար, գ. Կարգ, տեղ, որը և պահել է արևմտահայերենը: Ինչ վերաբերում է անգար փոխառությանը, արևմտահայերենը պահում է բնագրի հանգար ձևը:

Էն - Այն ցուցական դերանվան հնչյունափոխված տարբերակը (Էն Լոռու ձորն է... ՀԹ): // Թուրքերենից փոխառյալ գերադրական մասնիկ՝ ամենա, ամենից իմաստով: Սովորաբար գործածվում է շեշտով (Իրենց է՛ն անկեղծ համբոյրը եղաւ: ... Եթէ կայ տարր մը, որ ազգին յանդէպ ընկրկելուն համար է՛ն քիչը արժանի է մեղադրանքի... ԾԾ):

Թունել - Գետնուղի // Թույնել, թունավորել:

Արևելահայերենում թույն արմատից կազմված բալը գրականում ունենում է թունավորել ձևը (խոսակցական տարբերակն է թույնել՝ առանց շեշտափոխական հնչյունափոխության): Արևմտահայերենում այս բայն ունենում է կանոնական թունել թևը, որը համանունային զույգ է կազմում ֆրանսերենից փոխառյալ թունել (գետնուղի) բառի հետ:

6. Հայերենի երկու տարբերակներում առավել լայն տարածում ունեն այն բազմիմաստ բառերը, որոնց իմաստների միջև նախապես եղած կապը խզվել է, և առաջացել են երկու տարբեր իմաստ ունեցող համանուն բառեր: Այսպես՝ անջրպետ բառը, որ նախապես ուներ ա. Պատվար, բաժանարար, բ. Միջոց, տարածություն, հեռավորություն իմաստները, արևմտահայերենում ձեռք է բերել նաև տիեզերք իմաստը, որը 2-րդ՝ տարածություն, հեռավորություն բառերի վերափ-

մաստավորմամբ լիովին հեռացել է նախնական իմաստից՝ կազմելով համանունային գույգ: Բառիմաստի նեղացմամբ արևմտահայերենում այս բառի մյուս իմաստը վերածվել է եզրույթի՝ նշանակելով երաժշտական ինտերվալ, որով և առաջացրել է մի այլ համանունային գույգ:

Ախոյեան - Հակառակորդ // Չեմպիոն (Մատրակի գիծով աշխարհի ախոյեան Տ. Պետրոսեան... Մամ.):

Առարկայական - Առարկային վերաբերող, իրական, փաստական // Օբյեկտիվ, անաչառ: Այս իմաստային անցումը արևմտահայերենում պայմանավորված է լատիներեն *objectivus* բառի անմիջական թարգմանությամբ, որով և առաջանում են հիշյալ համանունները:

Գոց բառը, որ մտնում է առավելաբար արևմտահայերենին բնորոշ բառերի խմբի մեջ, ունի փակ, կողպված, ինչպես նաև անգիր, բերանացի իմաստները (**Գոց** գիտե՛ ամէն մէկուն դիրքն ու պատկերը... **ԳՁ**): Վերջինս ծագել է նախնական փակ իմաստից և այնքան է հեռացել նրանից, որ կարելի է դիտարկել որպես բազմիմաստության հիմքով առաջացած համանուն: Ընդ որում այս բառերը համանուն են ոչ միայն արևելահայերեն-արևմտահայերեն դիտարկմամբ, այլ հենց արևմտահայերենի համակարգում ևս ներկայացնում են համանունային գույգ:

Գրագետ - Գրաճանաչ, գրել-կարդալ իմացող (Գլուղում միայն մի գրագետ մարդ կար... **ՀԲ**): // Գրականությամբ զբաղվող, գրող, գրականագետ (Մտառդ կը փափաքի գրականութեամբ ազգին ծառայել, բայց այս ազգը շատ ապերախտութեամբ կը վարվի իւր գրագետներուն դէմ... **ՀՊ**):

Կողք - Մարմնի աջ կամ ձախ մասը (Բաղամյանը շուռ եկավ մյուս կողքի վրա... **Ն**): // Գրքի՝ տետրի կազմ (Կողքի գծագրությունը Մ. Փանոսյանի...):

Կորիզային - Կորիզին վերաբերող // Ատոմային (ԱՄՆ-ի մէջ եւ այլուր «կատաղիներ» կան, որոնք ակոս կը սրեն ի տես Մոսկուայի կորիզային դաշնագրի... Մամ.): Գործածական են նաև կորիզաբան (ատոմագետ), կորիզաբանություն (ատոմագիտություն) բառերը:

Ջրի - Անվճար (Բագարանցիք ձրի պաշար էին բաժանում հայ գորբերին... Մ): // Ջուր, ավելորդ, անհիմն (Բոլոր հարցաքննությունները կը հերքեն այդ ձրի ու անմիտ առարկությունը... **ԳՁ**):

Մեղք - Հանցանք (Մի՞թե մեղք է սեփական համոզումներ և ճաշակ ունենալը... **ՎՏ**): // Ափսոս, ափսոսալի // (Ինչու՞, ինչու՞ զիս սիրեցիր, փոքրի՛կ աղջիկ, քեզի մեղք էր... **ՌՍ**):

Որոշ - Առանձին, մի քանի (Դրա հետևանքով որոշ թանկագին տեսակներ, ինչպես, օրինակ, սոճին, գիհին, եղևնին դուրս են գալիս շարքից): // Պարզ, որոշակի (Եթե չես հասկնար, ուրեմն աւելի որոշ կերպով խոսիմ... **ԵՕ**):

Պահ - Կարճատև ժամանակահատված, ակնթարթ (Փակում եմ հոգնած աչքերս մի պահ... **ԵՁ**): // Դասածամ (Գիտեմ ձեր պայմանագրությունը՝ շաբաթական քսանչորս պահ դաս ... **ԳՍ**):

Պանդոկ - 1. Ցածր կարգի գինետուն (Այնինչ պանդոկների մթնոլորտն արդեն դրել էր լուր դորշմը նրա վրա... **Ե**): // Հյուրանոց (Փարիզէն բարեկամ մը յանձնարարած էր, գացի կայարանէն առի, պանդոկ տարի... **ԵՕ**):

Պաստառ - Սենյակի պատերին փակցվող թղթի կամ կտորի շերտ, 2. Ծածկոց (Նրա ընդարձակ տունը, ուր ոչ մի օթյակ ծածկված չէ պաստառով, մոայլ բանտ է իր կնոջ ու զավակների համար... **Ե**): // Կինոյի, հեռուստացույցի էկրան (Պէլյուրի պաստառներուն վրայ դիտեցէք... Մամ): Ուշագրավ են այս բառում գործառական հիմքով կատարված իմաստափոխությունները՝ կերպաս (կտոր, գործվածք), ապա դրանից պատրաստված էկրան, որի վրա շարժանկար են ցույց տալիս, այնուհետև՝ նույն նպատակին ծառայող՝ հեռուստացույցի էլեկտրոնային փողորակ:

Սառ(ը) - Պաղ, ցուրտ, (Սառն աղբյուր) // Սառույց* (Գարեգին սառի կտոր մը կը զգար իր ձեռաց մէջ ... ՏԿ):

Քարափ - Գետի՝ լճի՝ ծովի ևն քարքարոտ ափ (Մեր Դեբեդը լեռ քարափին Դեռ ծեծում է, հեծեծում է... ՀԹ): // Նավամատույց, կառամատույց (Միայն ուղեւորները մնացած են շոգեմալը, որոնք կամրջակին վրայ հաւաքուած կը դիտեն քարափին վրա կեցող իրենց բարեկամները... ԵՕ): ԺՀԲԲ-ն արևմտի. Աշունով, իբրև բառի երկրորդ իմաստ, բացատրում է. Նավահանգիստներում քարով պատված ծովափ, այսինքն՝ բառը համարված է բազմիմաստ, և իմաստային կապը՝ անցումը, հիմնավորելու համար տրվում է հիշյալ բացատրությունը: ԱՀԲԲ-ն առանց որևէ մեկնաբանության, իբրև բառի երկրորդ իմաստ, Աշուն է նավահանգիստ, միևնույն պէտք է լինի նավամատույց:

7. Վերջապես, իբրև մի առանձին բառախումբ հարմար ենք գտնում Աշել այն համագիր և համահունչ բառերը, որոնք արևելահայերեն-արևմտահայերեն կտրրվածքով բովանդակության պլանում ցուցահանում են որոշակի տարբերություններ, սակայն նրանց իմաստների միջև եղած առնչություններն ու կապերը դեռևս ընկալելի են և չեն գիտակցվում որպես տարբեր բառեր: Ըստ երևույթին, դրանց մի մասը պետք է համարել բազմիմաստ, իսկ մյուս մասը՝ բազմիմաստությունից համանունության անցման տարբեր փուլերում գտնվող բառեր: Ավելորդ չենք համարում բերել նման բազմաթիվ բառերից մի քանի նմուշ:

Անառակ - Անբարոյական, լիրբ: // Չարածի:

Արկած - Դիպված, պատահար: // Վթար: (Բառիմաստի նեղացում):

Գետին - Ուրքի տակի հող // 1. Ասպարեզ: 2. Հիմք: 3. Հիմունք: (Բառիմաստի ընդլայնում): (Մեր մէջ գետին չկայ, շարժում չկայ, գործունէութեան դաշտ չկայ... ԾՕ):

Գիտելիք - Որևէ բնագավառի վերաբերյալ մարդու իմացածների ամբողջություն: // Տեղեկություն:

Գծագրել - Գծագիր կազմել: // Նկարել:

Ցայտնի - Հանրահայտ, նշանավոր: // Ակներև, ակնհայտ:

Տակառ - Փայտե զլանաձև անոթ: // Նավթամթերքների և սորուն նյութերի չափման միավոր՝ բարել:

Տղա, տղայութիւն - Տղա լինելը: // 1. Երեխայություն: 2. Մանկություն: 3. Մանկանը բնորոշ վարմունք: (Ահա. ես տղայ չեմ. գիտեք, թէ բնաւ տղայ չեմ, բայց եթէ օր մը աւելի մնամ հոս, ըրածս տղայութիւն պիտի ըլլայ... ԾԾ):

Փափաքող - Ցանկացող: // Որևէ պաշտոնի կամ կոչման հետամուտ, հայցող, թեկնածու:

Օրիորդ - Կույս աղջիկ: // Ուսուցչուհի:

Ինչ խոսք, բերված օրինակների մի մասը կարող են ընկալվել իբրև համանուններ, քանի որ, ինչպես արդեն նշեցինք, լեզվաբանները այս հարցում ունեն շատ մեծ տարակարծություններ, բացակայում է միասնական մտտեցումը: Պատահական չէ, որ միևնույն բառը որոշ բառարանագիրների կողմից համարվում է բազմիմաստ, ուրիշների կողմից՝ համանուն: Դրանք երբեմն տրվում են առանձին զխաբատերով, երբեմն էլ՝ նույն զխաբատի տակ առանձին թվահամարներով:

Արդ, ի՞նչ դեր ունեն այս խմբի մէջ ամփոփված բառերը կենդանի խոսքում, որո՞նք են դրանց կիրառական առանձնահատկությունները: Երբ խնդիրը դիտարկում ենք մեր լեզվի երկու տարբերակների հետագա մերձեցման և փոխ-

* Սառ բառը, որ արևելահայերենում ածական է, արևմտահայերենում վերածվել է գոյականի՝ սառույց իմաստով: ԱՀԲԲ-ն այս իմաստը բերում է բառի 20-րդ իմաստի տակ՝ առանց արևմտ. Աշունի, իսկ ԺՀԲԲ-ն Սառ բառը հիշելով Սառը ձևին՝ իբրև բնագրային օրինակ բերում է Պ. Դուրյանի հետևյալ տողը. «Հալեց սառեր գարնան արև», որտեղ սառեր բառը ակնհայտորեն նշանակում է սառույցներ:

հարստացման տեսակետից, ակնհայտ է դառնում, որ այս կարգի բառերը պահանջում են առանձնահատուկ մոտեցում: Վերոհիշյալ բոլոր բառերն էլ, լինեն դրանք բացարձակորեն տարբեր իմաստ արտահայտող համանուններ կամ բառիմաստի տարբեր փոփոխություններով լրացուցիչ իմաստներ ձեռք բերած և որոշ իմաստային նրբերանգներով տարբերվող բառեր ու բառաձևեր, ակնհայտ է մի բան. դրանք իրենց իմաստային առանձնահատկությունները դրսևորում են համապատասխան խոսքային միջավայրում՝ արևմտահայերեն խոսքում: Կտրել դրանք այդ համակարգից և ներմուծել արևելահայերենի մեջ, կնշանակի դրանք հակադրել այդ համակարգում արդեն քաղաքացիությունն ստացած և արևելահայերեն խոսող հանրության համար սովորական դարձած բառաձևերին ու դրանց իմաստներին: Այսօր մամուլում, երբեմն էլ գեղարվեստական գրականության մեջ, հայերենի երկու տարբերակների մերձեցման ազնիվ մղումով, փորձ է արվում կատարել բառապաշարային փոխներթափանցումներ, որոնք շատ տարածված են և աճշուշտ ունեն խրախուսելի միտում: Սակայն արևմտահայերենի բառերով արևելահայերենը հարստացնելու մղումը չպետք է լինի հախտուն և անսկզբունք: Քրոնոսը կտրվող բառախումբը՝ երկու տարբերակներում իմաստային տարբերություն ունեցող բառերը, արդի լեզվազգացողությամբ սուկ կարող են իմաստային շփոթ առաջացնել: Սակայն երբ ոմանք փորձում են գրագետ բառը արևելահայերեն բնագրում գործածել արևմտահայերեն իմաստով՝ գրականությամբ զբաղվող, գրող, կամ չհասկանալով թուրքերենից փոխառյալ էն գերադրական մասնիկի իմաստը՝ այն գործածում են իբրև ցուցական դերանուն. «Հովհաննես Թումանյանը էն մեծ գրագետն է...», արտահայտվող միտքը խաթարվում է:

Որպեսզի մեր այս պնդումները չհնչեն մերկապարանոց և փաստագուրկ, բերում ենք նման մոտեցումների անարդյունավետությունը ցուցաբերող և բարեբախտաբար սակավաթիվ փորձերից մի քանի նմուշ: Խոսքը ֆրանսերենից կատարված մի թարգմանության մասին է, ուր թարգմանիչը արևելահայ բնագրում բառերը գործածում է արևմտահայերեն իմաստներով:

Այսպես, հոտել բառը արևելահայերենում ունի նեխել, բորբոսնել, փտել իմաստները, բայց ոչ երբեք արևմտահայերենին բնորոշ բուրել, հոտ գալ իմաստները: «Գիտե՞ս ինչպես է հոտում վառողը, երբ կրակում են անտառում...»: Ակնհայտ է, որ խոսքը վառողը բուրելու կամ վառողի հոտ գալու մասին է:

Մորուք բառը արևելահայերենում ունի որոշակի կոնկրետ իմաստ. այն ծնոտի վրա աճեցրած մազափունջն է: Արևմտահայերենում, բացի վերոհիշյալից, այս բառն ունի առհասարակ դեմքին աճող մազեր իմաստը: Վեպում թարգմանիչը մորուք բառը գործածել է հենց այս իմաստով, և ստացվել է առավել քան տարօրինակ միտք. «... հիշյալ Ֆորուան քսան տարուց ի վեր ամեն շաբաթ օր սափում էր իրենց հոր մորուքը...» (էջ 630):

Պարզ երևում է, որ խոսքը հոր դեմքը կամ երեսը սափրելու, ածիլելու մասին է:

Ձանձրույթ բառը արևելահայերենում նշանակում է տաղտուկ, իսկ արևմտահայերենում ունի նեղություն իմաստը, մանավանդ հետևյալ կայուն կապակցություններում՝ ձանձրույթ տալ-նեղություն տալ, ձանձրույթը քաշել-նեղություն կրել և այլն: Թարգմանիչը բոլոր դեպքերում բառը կիրառում է արևմտահայերեն իմաստով. «Այլապես կխնայեի ձեզ այս ձանձրույթը» (էջ 519): «Ննջեցյալի սեղանը բարձրանալու ձանձրույթը քաշել...» (էջ 368):

Երբեք բառը արևելահայերենում ունի ոչ մի ժամանակ, ոչ մի դեպքում իմաստները, օր. «Եվ երբեք, երբեք չի աղոտի քո կանթեղը խավար մեր հոգում» (Ե2):

Արևմտահայերենում այս բառն ունի նաև երբևէ, ինչ-որ ժամանակ իմաստը, որով և այս բառը գործածել է թարգմանիչը. «Եթե երբեք երկնքից մի ժառանգություն չիջնի մանանայի նման...» (էջ 559):

Նշենք մի քանի դեպքեր, երբ բառերի իմաստային դաշտերը երկու տարբերակներում չեն համընկնում: Բառի արևմտահայերեն իմաստով գործածվելը արևելահայերեն բնագրում սուկ կարող է աղճատել հեղինակի միտքը:

Ճգմել բառը թե արևելահայերենում ունի տրորել, ճգմել, ինչպես նաև ճնշել իմաստները (տես Ա,ՀԲԲ-ն և ԺՀԲԲ-ն), սակայն արևելահայերեն խոսողը երբեք չի ասի թուղթը կամ նամակը ճգմել: Դրա փոխարեն կա ճմռթել բայը: Վեպի թարգմանության մեջ կարողում ենք. «Գրպանում ճգմելով Դանիելի նամակը...» (էջ 787):

Գետնախնձոր բառով արևելահայը բոլորովի այլ արմատապատկեր է անվանում, քան արևմտահայը: Արևմտահայերենում այն համապատասխանում է կարտոֆիլ իմաստին, որ նրանք երբեմն անվանում են փաթաթես (բատատ բառից): Այնպես որ, վեպում հանդիպող տապակած գետնախնձոր (էջ 548) արտահայտությունը արևելահայ բնագրում անիմաստ է հնչում (գետնախնձորը չեն տապակում, այլ ուտում են հում վիճակում):

Արևելահայերենի և արևմտահայերենի բառապաշարային առնչությունները հարուստ են արդյունավետ համագործակցության բազում օրինակներով: Մասնավորապես անուրանալի է արևմտահայերենի դերը արևելահայերենի օտարաբան ձևերը հայեցի նորակազմություններով փոխարինելու, ինչպես նաև արևելահայերենի դերը գիտատեխնիկական տերմինաբանությունը արևմտահայերենի սեփականությունը դարձնելու գործում:

Սակայն վերը հիշատակված օրինակները անառարկելիորեն հանգեցնում են այն մտքին, որ մեր լեզվի երկու տարբերակների փոխհարստացման ուղիները պետք է որոնել ոչ թե համանուն և բազմիմաստ բառերի մեջ, այլ բառապաշարի այն ոլորտերում, որոնց արդյունավետ համագործակցության պտուղները հայտնի են վաղուց: Սակայն դա արդեն այլ քննության նյութ է:

Համառոտագրությունների ցանկ

ԱԱ - Արփիար Արփիարյան	ՀՊ - Հակոբ Պարոնյան	ՌՍ - Ռուբեն Սևակ
ԱԲ - Ակսել Բակունց	ՀՔ - Հրաչյա Քոչար	ՍՆ - Սերո Խանգաղյան
ԳԶ - Գրիգոր Զոհրապ	Մ - Մուրացյան	ՎԽ - Վիգեն Խեչումյան
ԳՍ - Գեղամ Սևան	ՄՄ - Միսաք Մեծարենց	ՎՄ - Վահրամ Մավյան
ԴԴ - Դերենիկ Դեմիրճյան	ՄՊ - Մկրտիչ Պեշկոբաշյան	ՎՏ - Վահան Տերյան
ԴՎ - Դանիել Վարուժան	Ն - Նար-Ռոս	ՏԿ - Տիգրան Կամարական
ԵԶ - Եղիշե Զարենց	ՆԶ - Նաիրի Զարյան	ՏՁ - Տիգրան Զյուլուրյան
ԵՕ - Երվանդ Օտյան	Ծ - Ծիրվանգաղե	Բ - Բաֆֆի
ԶՄ - Զարեհ Մելքոնյան	ԾԾ - Ծահան Ծահնուր	
ՀԹ - Հովհաննես Թումանյան	ՊԴ - Պետրոս Դուրյան	

Ա.Բ. - Ա. Սարգսյան, Արևմտահայերենի բառարան, Եր., 1991:

ԱՀԲԲ - Էդ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան (2 գրքով), Եր., 1976:

ԺՀԲԲ - Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան (4 հատորով), Եր., 1969-80:

ՀԼՆԲ - Հայոց լեզուի նոր բառարան (երկու հատորով), Պետրոս, 1992:

Մամ. - Մամուլ:

ՆԲՀԼ - Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Եր., հհ. Ա-Բ, 1979-81:

Р. К. САКАПЕТОЯН - Разные значения фонетически одинаковых слов в западноармянском и в восточноармянском литературных языках. - В статье исследованы омонимы и многозначные слова западноармянского и восточноармянского языков, семантическая структура которых в двух вариантах армянского языка либо не совпадает, либо совпадает частично. Прослеживаются пути образования омонимических рядов, а также определяются сферы употребления этих лексических единиц.